

Ներառական լուսաբանում

Ձեր աշխատանքի ընթացքում հիշե՛ք ներառական լուսաբանման մասին:

Դա այն է, երբ, օրինակ՝ լրագրողը հաշմանդամություն ունեցող մարդու աշխատանքի իրավունքին անդրադառնում է ընդհանուր գործազրկության համատեքստում, կամ մատչելի միջավայրի մասին խոսում է այն ժամանակ, երբ հարցը վերաբերում է դպրոցաշինությանն ու վերանորոգմանն ընդհանրապես:

Այդպիսով, հաշմանդամություն ունեցող մարդկանց խնդիրը դիտվում է որպես ամբողջի մաս: Այս կարգի լուսաբանումները հաճախ ավելի տպավորիչ են, քան կոնկրետ հաշմանդամության թեմայով մեկ առանձին հոդվածը կամ հաղորդումը: Օրինակ՝ Երևանին անդրադառնալիս հիշեք նաև մատչելիության խնդրի մասին, կամ սեպտեմբերի մեկին գիտության օրվան նվիրված հաղորդումներում խոսեք նաև հաշմանդամություն ունեցող երեխաների խնդիրներին, կանանց հիմնահարցերի մասին բարձրաձայնելիս հատուկ ուշադրություն դարձրեք հաշմանդամություն ունեցող կանանց և այլն:

Չարուհի Բաթոյան